



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՄ 1922

3516

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ

ՈՒՄ Ե ՊԵՏՔ
ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՈՒՆԴԸ



215
U-25

Арм.

2-3344

Լ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

23 SEP 2000

215-
4-25

ՈՒՄ Ե ՊԵՏՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Г.П.Б на обяз. экз.
Лнгр 1931 год
Акт № 21

Инв. № 22042

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴ. ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐՈՍԿՎԱ. 1931

23.09.2013

3516

0005 932 85



39798-67

Главлит № А-77168

Зак. 2684

Тираж 6000

н. ф-кл Центрадгата народов СССР. Москва Шлюзовая набережная, д. 10

Մեծ ուրախութիւնների ու տանջանքների մեջ ե ծնվում նոր կյանքը:

Միլիոնավոր աշխատավորները բանվոր դասակարգի ու նրա շտաբի — Լենինի կուսակցութեան — ղեկավարութեամբ մեր յերկիրը մաքրեցին կալվածատերերից, ցարական զենեւրաւներից ու չինովնիկներից, ազգայնացրին հողը, խլեցին կապիտալիստներից ֆաբրիկները, գործարանները, հանքերը, բանկերը, յերկաթուղագծերը, ստեղծեցին կոոպերացիան:

Խորհրդային իշխանութիւնը գոյութիւն ունի ավելի քան 13 տարի, հնայած այն բանին, վոր մինչև ատամները զինված թշնամին սեղմում եր մեզ ամեն կողմից, ապստամբութիւններ եր կազմակերպում յերկրի

ներսում և վնասարարություններն մի ամբողջ սխառեմ եր ստեղծել մեր տնտեսութեան բոլոր հիմնական ճյուղերում:

Սորհրդային Միութեան հզորությունը հսկայորեն աճել է: Մեր արդյունաբերությունը կրկնակի ուժեղ է նախապատերազմյան շրջանի արդյունաբերությունից: Առևտուրն այլևս չի գտնվում վաճառական դասակարգի ձեռքում, վորովհետև բանվորները, գյուղի չքավորներն ու միջակները, աշխատավոր կուստարներն ու ծառայողները կարողացան կառուցել կոոպերացիան:

Սովխոզներն ու կոլխոզներն այժմ արդեն վճռողական դեք են խաղում գյուղական տնտեսութեան մեջ:

Դուրս գալով իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմներից անծայր չքավորութեան մեջ, քայքայված տնտեսությունով, արդյունաբերական ապրանքների ու մսի, յուղի, բամբակի, վուշի սուր պակասութեան մեջ, շատ վատ աշխատող տրանսպորտով,

պորտով, մենք մի վեց-յոթ տարվա ընթացքում վերականգնեցրինք տնտեսությունը նախապատերազմյան չափերով և շատ բաներում նրան հիմնովին վերափոխման յենթարկեցինք:

Դժվար եր:

Հեշտ չի անել մի գործ, վոր բոլորովին նոր է մեզ համար, այն ել թշնամիների շրջափակման մեջ: Վոչ մի ժամանակ բանվորները ֆաբրիկներ չեյին կառավարել — նրանք ստիպված եյին սովորել բազմաթիվ սխալների վրա:

Իսկ հիմա մեր ֆաբրիկներն ավելի շատ են արտադրում, քան թե մինչև պատերազմն ու հեղափոխությունը: Վոչ մի ժամանակ յերկաթուղային բանվորները չեյին կառավարել՝ բեռներ ու ճանապարհորդներ փոխադրելու գործը: Բայց ձեռք առնելով այդ գործը, մենք սովորեցինք բաց թողնել գնացքները ժամացուցակների համաձայն, տեղա-

փոխել ավելի շատ քանակությամբ ապրանքներ ու մարդկանց, քան թե առաջ եր:

Արտասահման վաճառված շաքարի գործաբանատերերը գոռում գոչում եյին, թե գյուղացիները, վորոնց մշակմանն են անցել գործարանների ճակնդեղային պլանտացիաները, չեն կարող պահանջված քանակությամբ ճակնդեղ աճեցնել:

Կարողացան: Իսկ կոլխոզներն ավելի հաջող կերպով են տանում ճակնդեղային տընտեսությունը:

Մեր կուսակցության ուղիղ քաղաքականության շնորհիվ իրոք մեծ են խորհրդային շինարարության հաջողությունները: Այդ հաջողություններն ստիպված են խոստովանել հենց իրենք արտասահմանյան կապիտալիստները, վորոնք մեծ տագնապով են գրում իրենց թերթերում, ժուռնալներում ու գրքերում այն մասին, վոր հնգամյա պլանն իրոք կատարվում է, վոր չքավորներն ու միջակ-

ներն իրոք կառուցում են կոլխոզներ, վոր յերկաթուղագծերն իսկապես սկսում են աշխատել, վոր ներկայումս կառուցվող հսկայական գործարանները պատրանք չեն, այլ կապիտալիստների համար դառն իրակա-նություն: Շատ նշանավոր են մեր նվաճումները: Բայց նշանավոր են և դժվարությունները: Այդ դժվարությունները մենք ճաշակում ենք և՛ պարենավորման ֆրոնտում (քիչ է միսը, կաթը, յուղը և մի քանի ուրիշ մթերքներ), և՛ մեքենաների մատակարարման գործում, և՛ լայն սպառում ունեցող արդյունաբերական ապրանքների մեջ, և՛ կադրերի խնդրում:

Այս բոլոր դժվարություններն առաջ են են յեկել նրանից, վոր հին ֆաբրիկները վատ եյին սարքավորված, ստանոկներն ու մեքենաները հնացած եյին նրանցում, յերկաթուղային ճանապարհներն ու շարժական կազմը խիստ մաշված եյին, գյուղական անտեսու-

թյան մեջ իշխում էյին անհատական ծու-
լեքերը, յեռագաշտյան սխտեմը, արորն ու-
փայտե ցաքանը, ազգաբնակությունը կի-
սագրագետ և անգրագետ եր: Կուլակները,
սեպմանները, բյուրոկրատները, նախկին
ամեն տեսակի մարդիկ, արտասահմանյան
կապիտալի ներկայացուցիչ-փաստարարները,
նրանց հետ միասին տեղաբնիկներն ու աղան-
դավորները միշտ ձգտում էյին խանդարել
սոցիալարարության գործը, ձեռնարկելով հա-
կահեղափոխական փաստարար աշխատանք-
ներ:

Բայց մեր դժվարությունները հանդիսա-
նում են նաև աճման դժվարություններ:

Հեղափոխությունն արթնացրեց բանվոր-
ներին ու աշխատավոր գյուղացիներին նոր
կյանքի ձգտումով, առաջ բերեց նրանց մեջ
ավելի մեծ ու նոր պահանջներ, ավելացրեց
նրանց յեկամուտները, վորովհետև բարձրա-
ցավ աշխատավարձը, կրճատվեցին տուր-

քերը, խիստ չափով պակասեցին այն ավե-
լորդ վճարները, վոր տալիս էյին կուստար-
ները, չքավոր ու միջակ գյուղացիները,
ամբողջ աշխատավոր ազգաբնակությունը —
գնումներ կատարող գիշատիչներին, կողոպ-
տիչ վաճառականներին ու խանութպաններին:

Աշխատավոր ազգաբնակությունը ձգտում
է դեպի գիրքն ու ուսումը և բանվոր կամ
չքավոր ու միջակ գյուղացի ծնողները ուզում
են, վոր իրենց յերեխաները սովորեն դպրոց-
ներում:

Այլևս շատ քիչ են գնում վհուկների և
մյուս շառլատանների մոտ. դրա փոխարեն
ավելի հաճախակի դիմում են բժիշկներին:

Մեր դժվարությունները հետևանք են
մի կողմից անիծված անցյալի, մյուս կող-
մից ել հետևանք են տնտեսական, կուլտու-
րական ընդհանուր վերելքի ու սոցիալիզմի
ծավալված արշավից առաջացող դասակար-
գային պայքարի սրման: Գյուղատնտեսական

մեքենաները ներկայումս շատ ու շատ ավելի
յեն արտադրվում, քան մինչև պատերազմը,
բայց դրանք ելի չեն բավականացնում:

Ինչո՞ւ: Վորովհետև գյուղը հասկացել է
մեքենական մշակման վրա հիմնված՝ հան-
րայնացված խոշոր տնտեսության առավե-
լությունները, վորովհետև գյուղն այդ կող-
մից ևս ուժեղ չափով աճել է:

Սակայն մենք չենք ուզում հանգստանալ
նրանով, վոր դժվարությունների պատճառ-
ները բացատրված են արդեն:

Պրոլետարիատն ու կուսակցությունը աշ-
խատում են վերացնել այդ դժվարություն-
ները՝ վորքան կարելի յե արագ կերպով:
Յեվ վորքան ավելի ակտիվ մասնակցություն
ցույց տան մասսաները շինարարության մեջ,
վորքան ավելի ուժեղ կերպով զարգանա հար-
վածայնությունն ու սոցմրցությունը, այն-
քան մենք ավելի շուտ կվերացնենք դժվար-
ությունները:

Հնգամյա պլանն արդեն այնպիսի զար-
գացում է նշել տնտեսության համար, վոր
ամբողջ յերկիրը հնգամյակի վերջին կապա-
հովիի հացով ու արդյունաբերական ապրանք-
ներով:

Իսկ հնգամյա պլանը իրագործվելու յե վոչ
թե 5, այլ 4 տարում:

Համկոմկոսի (բ) XVI համագումարն ասել
է, վոր մենք մի տարով կարող ենք կրճատել
հնգամյա պլանի կատարման ժամանակա-
միջոցը:

Խոշոր արդյունաբերության հաջող զար-
գացումն ու կոլխոզային շինարարության
հակայական թափը թույլ է տալիս մեզ հաղ-
թահարելու հիշված դժվարություններն ավելի
արագորեն, քան դա յենթադրվում էր մի
տարի առաջ:

Դեռ վերջերս էր, յերբ մեզ տանջում էր
հացի հարցը: Թե քաղաքը և թե գյուղական
ազգաբնակչության մեծ մասը՝ վոչ միայն

չքափորները, այլ և միջակներից շատերը, հացի խիստ կարիք եյին զգուս:

Արտասահմանյան բուրժուազիան, մեր սեփական նեպմանները, կուլակները, տերտերները, վրասարարները հրճվանքից ցնծում եյին, հուսալով վոր հացի սովը շուռ կտա խորհրդային յերկիրը և կրկին նա բուրժուական ու կալվածատիրական յերկիր կդառնա:

Սակայն պրոլետարիատը Իլլիչի կուսակցութեան ղեկավարութեամբ կոլեկտիվացման ու սովխոզների միակ ուղիղ ճանապարհը բռնեց. նա կարճ ժամանակվա ընթացքում հսկայական աշխատանք կատարեց— մոբիլիզացիայի յենթարկեց բանվորական ու չքավորա-միջակային ամենալայն մասսաների ափսիվութիւնը:

Պրոլետարիատը արագ ստեղծեց հարյուրավոր հզոր սովխոզներ, տվեց նրանց տրակտորներ, մեքենաներ, ավտոմոբիլներ, հեռախոսներ, գյուղատնտեսներ:

Հակառակ աջ ուղիւնիստների մարգարեյություններին, վորոնք հակառակ եյին կոլխոզների զարգացմանը, պրոլետարիատը շատ ուժեր ու միջոցներ ուղարկեց կոլխոզային շինարարութեան պաշտպանութեան ճակատը, վորի ոգուտը սկսել են արդեն գիտակցել վոչ միայն չքավորական, այլև միջակային մասսաները: Դրա հետեանքով հացահատիկային շրջաններում գյուղացիական տնտեսութիւնների յերկու հինգերորդական մասը միացել, հողի մշակման ընկերութիւններ, արտելներ ու կոմունաներ են կազմել:

Պրոլետարիատը սկսեց կազմակերպել մեքենա-տրակտորային կայաններ, վորոնք հսկայական աշխատանք են կատարել հացահատիկային շրջաններում:

Պրոլետարիատն ուժեղացրեց զանազան արդիւնաբերական ապրանքների ու գյուղատնտեսական մթերքների արտահանութիւնը դեպի արտասահման, իսկ դրանցից ստաց-

ված արտասահմանյան փողերով գնեց տրակտորներ ու մեքենաներ՝ գործարանների կառուցման համար:

Պրոլետարիատը հաջող կերպով գյուղատնտեսական գործիքների ու մեքենաների արտադրություն կազմակերպեց և ձեռնարկեց տրակտորային գործարանների կառուցման:

Դրանց հետևանքով հացահատիկային հարցը լուծված է հիմնականում:

Ստեղծվել են հացի պաշարներ, ազգաբնակչութունն ապահովվել է սև հացով, այժմ շատ ավելի յե տրվում նաև սպիտակ հաց, իսկ հնգամյակի յերրորդ տարում Խորհրդային Միությունը դառնում է հաց արտահանող մի պետություն, վոր միջոց կտա ուժեղացնելու սոցիալիստական ինդուստրացումը և մեքենաների մատակարարումը մեր տնտեսության:

Վոչ թե լացով, վոչ թե շփոթությունով, վոչ թե տրտնջալով, այլ համառ, ծրագրա-

յին, յեռանդուն աշխատանքով, աջ ուկլոնի՝ վորպես գլխավոր վտանգի դեմ և դեպի նրան ունեցած հաշտվողական վերաբերմունքի ու տրոցկիզմի դեմ տարվող վճռական պայքարով — մենք յերկիրը դուրս բերինք հացի դժվարություններից:

Շաքարի ճակնդեղի ցանքսերը 1930 թվին հավասար եյին 1 միլիոն 114 հազար հեկտարի, մինչդեռ հնգամյակը նշել է 1 միլիոն 87 հազար հեկտար 1932 — 33 թվի համար: Հնգամյակի չափն արդեն անցել ենք և մնացած յերեք տարվա ընթացքում մենք կկրկնապատկենք ճակնդեղի ներկայիս ցանքսերի քանակը:

1930 թվին բամբակ եր ցանված 1 միլիոն 767 հազար հեկտար, այն ինչ հնգամյակի պլանով պետք է ցանվեր 1 միլ. 529 հազար հեկտար միայն 1932 — 33 թվին:

Արդեն բամբակի հնգամյա պլանի չափից ավելին է կատարված, իսկ 1932 — 33 թվի

բամբակի ցանքսերը յերկու անգամ շատ կլինեն 1930 թվի ցանքսերից:

Հնգամյակի չափերից անցել ենք և յերկարավուն կտավատի վերաբերմամբ, վորի ցանքսերը կերկնապատկվեն առաջիկա 3 տարում:

Բայց կան դեռ ելի ուրիշ շատ մեծ դժվարություններ:

Գյուղատնտեսության մեջ անհրաժեշտ ելայնորեն զարգացնել անասնաբուծությունն ու հում նյութերի կուտուրաները:

Մեքենայական-տրակտորային կայաններն աշխատում են արդեն վոչ միայն հացահատիկային, այլ և հումուլթների ռայոններում: Իսկ 1930—31 թվին նրանք կբռնեն ավելի քան 20 միլիոն հեկտար տարածություն, մինչդեռ հնգամյա պլանով ծրագրված եր միայն 3 միլիոն հեկտար, այն ել՝ 1932—33 թվին:

Վոչ պակաս արագությունը պետք ե ծավալել և ուղիղ ձևով տարվող անասնաբուծությունը:

Ստեղծվում են անասնաբուծական ուժեղ կազմակերպություններ, ինչպիսիք են «Սկոտովոդ» (անասնաբուծ), «Ովցեվոդ» (վոչխարաբուծ), «Սվինովոդ» (խոզաբուծ), «Յուդա-կաթնային տրեստը»: Կոլխոզներն սկսում են կառուցել անասունների համար տաք շինություններ, սիլոսի աշտարակներ, եարգացնում են խոտացանություն ու զանազան կերի բույսերի ցանքսերը, սկսում են հիմնել խոզարաններ, կաթնային ագարակներ, թռչնային բակեր:

XVI կուսհամագումարը դիրեկտիվ ե տվել խոզաբուծական տրեստին, վոր նա խոզերի ապրանքային արտադրությունը 1930—31 թ. հասցնի վոչ պակաս մինչև 400 հազար գլխի, 1931—32 թ.—մինչև 3 միլիոնի և 1932—33 թ. վոչ պակաս 7 միլիոնից: «Սկոտովոդի» հոտերի մեջ խոզերի թիվը 1930—31 թ. պետք ե հասնի 3 միլ. 200 հազարի, 1931—32 թ. հինգ ու կես միլիոնի և 1932—33 թ.—9—10 միլիոնի:



39798-67

Խորհրդային Միության Հողօրհրդմը մի տե-
ղեկագիր ե հրատարակել այն մասին, թե
ինչ դրության մեջ ե գտնվում աշխատանքը
անասնաբուծական սովխոզներում առ 15 սեպ-
տեմբերի 1930 թ.:

Դուրս ե գալիս, վոր «Սկոտովոդի» «Ուլցե-
վոդի», «Սվինովոդի» և «Յուդային տրեստի»
մոտ 500 սովխոզներ են կազմակերպվում:
Առաջվա 4 միլիոն հեկտար հողին կտրվում
միացվում ե ելի ավելի քան 20 միլիոն հեկ-
տար: «Սկոտովոդի» հոտը հասցրվում ե ար-
դեն 600 հազար գլխի, իսկ Ուլցեվոդինը —
մինչև 2 միլիոն 600 հազարի: Անասնաբու-
ծական-տեխնիկումներում ընդունված են ար-
դեն 20 հազար սովորողներ, կազմակերպված
են կուրսեր՝ սովխոզների 800 դիրեկտոր
պատրաստելու համար:

Պարզ չե՞ արդյոք, վոր անասնաբուծու-
թյան այդպիսի աճման ու նրա ուղիղ կազ-
մակերպման դեպքում Խորհրդային Միու-

թյունը համեմատաբար արագորեն դուրս
կգա մսային, յուղային ու կաթնային դժվա-
րություններից:

Հարկավոր ե միայն հիստահատվել, չթու-
լանալ հսկայական դժվարությունների առաջ,
այլ վճռականորեն հաղթահարել նրանց:

Հեշտ չեր հացահատիկային պրոբլեմը, բայց
և այնպես նա լուծվեց:

Հեշտ գործ չեր նույնպես յետ մղել Կոլ-
չակներին ու Վրանգելներին, անգլիացիներ-
ին ու ֆրանսիացիներին, իմպերիալիստներ-
ին, — բայց մենք յետ մղեցինք:

Կբարձրացնենք մենք և գյուղատնտեսու-
թյունը, պաշտպանելով ու զարգացնելով կոլ-
խոզները, միաժամանակ ոգնելով նաև ան-
հատական տնտեսություն ունեցող չքավոր-
ներին ու միջակներին:

Ե՛լ ավելի կբարձրացնենք նաև արդյու-
նաբերությունը: Մեր արդյունաբերությունը
հնգամյակի յերկրորդ տարում 2 անգամ ավելի

յեր արտադրում, քան մինչև պատերազմը, իսկ 3-րդ տարում պետք է արտադրի 3 անգամ ավելի, քան արտադրվում էր նախապատերազմյան շրջանում:

Մենք պետք է ուժեղ կերպով ավելացնենք արդեն գոյություն ունեցող ձեռնարկությունների արտադրությունը և կառուցենք տասնյակներով ուժեղ առաջնակարգ գործարաններ, ֆաբրիկներ, շախտաներ:

Տեքստիլի, վոտնամանների, կաշվեղենի, սննդեղենի ֆաբրիկները չեն աշխատում լիովին ծանրաբեռնված չափերով, վորովհետև գյուղատնտեսությունը հում նյութեր քիչ է տալիս: Կոլխոզներն ու սովխոզները ավելացնում են այդ նյութերի արտադրությունը:

Իսկ դրա հետևանքով կաճի և տեքստիլի, կաշեգործական իրերի ու լայն սպառման մյուս առարկաների արտադրությունը: Ինչ վերաբերում է ծանր արդյունաբերության, վոր պատրաստում է մեքենաներ, մետաղա-

գործական նյութեր, վառելիք, քիմիական նյութեր, ելեքտրական եներգիա և այլն, — այստեղ արդեն ծավալվում է մի նոր հզոր շինարարություն և տեխնիկապես վերափոխման են յենթարկվում արդեն գոյություն ունեցող ձեռնարկությունները:

Ստալինգրադի տրակտորային գործարանն աշխատանքի յեանցել արդեն, իսկ 1—1½ տարուց հետո կսկսեն աշխատել և Սարկովի ու Չելյաբինսկի տրակտորային գործարանները:

Կառուցվում է հզոր ավտոմոբիլային հսկան տարեկան 140 հազար մեքենայի արտադրությամբ:

Մետաղագործական նոր հսկաները, ինչպես Մագնիտոգորսկինն է, Ջապորոժեյինը, Կուզնեցկինը, Նիժնե-Տադիլսկինը, Բակալսկինը, Լիպեցկինը, դրանք ամենալավերը կլինեն աշխարհում:

Հիմք են գցվում ուժեղ հանքահորերի, կառուցվում են առաջնակարգ սղոցարաններ,

ցեմենտի, աղյուսի, ապակու գործարաններ,
քիմիական կոմբինատներ:

Առաջին շարքերում վեր են բարձրանում
գորեղ ելեկտրոկայանները. Վոլխովի կայա-
նից մենք անցել ենք արդեն Դնեպրովսկին,
վորն ամենալավը կլինի Յեվրոպայում, իսկ
դրանից հետո ծրագրվում են ելի նոր, ավելի
ուժեղ կայաններ՝ ավելի եժան ելեկտրո-
ններ գլխավ:

Անասելի արագությամբ ե աճում արդյու-
նաբերական ապրանքների արտադրությունը,
կուսակցությունը մոբիլիզացիայի յե յեն-
թարկում պրոլետարիատի բոլոր ուժերն այն
բանի համար, վորպեսզի ապրանքների արտա-
դրությունն եժանանա, և վորպեսզի նրանց
վորակը բարելավվի: Աշխատանքի այդպիսի
թափը մեծ չափով նոր կադրեր ե պահանջում:

Պահանջվում են տասնյակ հազարավոր ին-
ժեներներ, տեխնիկներ, գյուղատնտեսներ,
անասնաբույժներ, գիտնականներ-բիոլոգներ,

կենդանաբաններ, քիմիկոսներ, ֆիզիկոսներ
և այլն:

Արդյունաբերությունը նոր բանվորների
հսկայական բանակի պահանջ ե առաջադրում,
իսկ կոլխոզները կարիք են զգում կազմա-
կերպիչների, վարչական անձերի, տրակտո-
րիստների, մեքենաների հետ վարվել իմա-
ցող և նրանց վերանորոգող մարդկանց:

Արդեն կան այժմ և շարունակում են
ստեղծվել նոր բարձրագույն դպրոցներ, մաս-
նագիտական ուսումնական հիմնարկություն-
ներ, տեխնիկումներ, ամեն տեսակ կուրսեր
ու խմբակներ: Լայն չափեր ե ընդունում
հեռակա (զտոչնի) կրթության գործը:

Բազմապատկվում ե ֆաբրիկ-գործարանա-
յին դպրոցների և գյուղատնտեսական կուր-
սերի թիվը:

Դպրոցական գործը վերաշինվում ե պոլի-
տեխնիկական ուղղությամբ, ուսումը սերտ
կերպով կապվում ե ֆաբրիկ-գործարանային

ու գյուղատնտեսական արտադրութեան հետ:

Անգրագիտութեան վերացումը հարվածա-
յին գործ ե դարձել:

Մենք նպատակ ենք դրել ամենակարճ ժա-
մանակում վերացնել յերկրում անգրագիտու-
թյունը, բարձրացնել ինչպես քաղաքական,
նույնպես և տեխնիկական գրագիտու-
թյունը, ուժեղացնել և ուղիղ ձևով կազմա-
կերպել պայքարը կրոնի դեմ: Սոցիալիստա-
կան վոգով են վերակառուցվում և կուլտու-
րան, և տնտեսությունը, և արտադրությունը,
և տրանսպորտը, և մատակարարումը:

Կուսակցությունը կոչ ե անում ամենայե-
ռանդուն—ու հաստատակամ աշխատանքի՝
կուլտուր-կենցաղային փրոնտում:

Այն բոլորը, վոր մնացել ե կալվածատի-
րական և բուրժուական անցյալից, պետք ե
վերացվի, վերանորոգվի, փոխարինվի նորով:

Վճռական կռիվ ե հայտարարված ազգայ-
նական խտրութեան դեմ, և կուսակցությունը

պահանջում ե առանց վերապահութեան վա-
րել լենինյան քաղաքականություն ազգային
հարցի վերաբերմամբ:

Մենք չենք թույլ տա, վոր վելիկոռուսա-
կան շովինիզմը և ազգային սահմանափակ-
ման վորձկումները արգելակներ դնեն սո-
ցիալիստական շինարարութեան առաջ:

Մենք չենք կարող հաշտվել աշխատավոր
կնոջ վերաբերմամբ մինչև այժմ ել դեռ հին
անցյալից մնացած արհամարանքի հետ:

Պրոլետարիատը պայքար ե մղում, վոր
բանվոր, կոլխոզնիկ, չքավոր ու միջակ կա-
նայք ել տղամարդուն հավասար չափով
մասնակցություն ունենան հասարակական
կյանքում:

Պետք ե վերացվի ընտանեկան հին կեն-
ցաղը իր ստրկունի կնոջով ու մայրով և պետք
ե լայն կերպով տարածվի անաստվածային
նոր կենցաղը, վոր դեռ միայն նոր-նոր ե
սկսում ծնվել:

Սոցիալիստական շինարարությունը չի կարող տանել կրոնական կենցաղը, վորը քայքայում է մտցնում սոցիալիստական կառուցողների շարքերում:

Պրոլետարիատն իր առաջ խնդիր է դրել — վոչնչացնել հարբեցողությունը, քիթ ու պոռնոգ ջարդելը, խուլիգանությունը, դեպի աշխատանքը անփույթ վերաբերմունք ունենալը, իրենց աշխատակից ընկերների հաշվից շորթելու ձգտումները:

Պրոլետարիատը չի կարող և չի ուզում տանել կրոնը, տերտերականությունը, աղանդավորությունը, վհուկությունը, վորովհետև ամեն մի կրոն ու տերտերականություն ամենափոխերիմ թշնամի յեն հանդիսանում սոցիալիզմի համար: Այդ պատճառով էլ մարտական խնդիրներից մեկն է՝ կրոնի, տերտերականության դեմ պայքարելը: Բայց այդ պայքարը պետք է տարվի վարպետորեն ու զգուշությամբ: Մենք չենք կարող և չպետք

է պայքարենք կրոնի դեմ ագամիստրատիվ ճանապարհով, բռնի միջոցներով: Պրոլետարիատը կրոնի դեմ պայքարում է՝ համոզելով, հասկացնելով, ակտիվ մասնակցության քաջելով հավատացյալներին շինարարության մեջ և կրոնի կատարած վնասարար դերը մերկացնելով:

Սոցիալիստական շինարարությունը պահանջում է կապվել զիտության հետ, լրջմիտ վերաբերմունք ունենալ դեպի արտադրությունն ու դեպի մեզ շրջապատող ամբողջ կյանքը:

Սոցիալիստական շինարարությունը չի կարող թույլ տալ, վոր հասարակական որդանիզմը քայքայվի ամեն տեսակ խոցերից, վերքերից ու պալարներից, վոր այդ որդանիզմի մեջ թաղնվեն կրոնի, յեկեղեցու և ամեն տեսակ կրոնական շառլատանության թշնամական ուժերը:

Մենք նոր կյանք ենք ստեղծում: Մենք վերջին ու վճռական կովի շրջանն ենք մտել

կապիտալիստական մնացորդների դեմ՝ մեր յերկրում:

Սոցիալիստական շինարարության գործը տանջալի դժվար պայմաններում է զարգանում, հանդիպելով ամենախիստ ու կազմակերպված դիմադրության՝ դասակարգային թշնամու կողմից, առանձնապես կուլակության կողմից: Բայց և այս գործը զարգանում է բազմակողմանի կերպով:

Այս 13 տարվա ընթացքում դեռ վոչ մի ժամանակ նոր կյանքի, այսինքն նոր տնտեսության, նոր կուլտուրայի, նոր կենցաղի հարցերը չեյին զրվել իրենց բազմակողմանիությամբ ու մեծությամբ:

Սոցիալիստական հարձակումը գնում է ամբողջ ֆրոնտի վրա:

Բայց ամբողջ ֆրոնտի վրա դիմադրում է և մեր թշնամին:

Կուլակն աշխատում էր ողջ ցնդեցնել և կոլսոզները, և կոնարակտացիան, և սպառո-

դական կոոպերացիան, և հասարակական ռեսուրսների կազմակերպությունը, և յերեխաների ու հասակավոր ազգաբնակչության ուսուցման գործը:

Դասակարգային թշնամին փաստարարություններ է գործում և մետաղագործության, և վառելանյութերի, և կոնսերվի արդյունաբերության մեջ:

Վնասարարություն է յերևան հանված և մսի ու ձկան գործում:

Դասակարգային թշնամին ներս է թափանցում ուսումնական հիմնարկությունների մեջ, վորպեսզի քանդի կադրերի նախապատրաստման գործը:

Վնասարարը ներս է թափանցում մամուլի մեջ, թատրոնական բեմերը:

Նա ամեն տեղ է:

Ուրիշ կերպ էլ չի կարող լինել:

Վորքան ավելի հաջող է պրոլետարիատի հարձակումը, վորքան ավելի սերտ է պրո-

պրոլետարիատի կապը գյուղի հետ, վորքան ավելի զորեղ ե մեր գրոհը առևտրի, մատակարարման մեջ, տրանսպորտում, ուսումնական գործում և այլն, այնքան ավելի խտանում են մեր դասակարգային թշնամու շարքերը, այնքան ավելի կազմակերպված են լինում նրանց յեւույթները, այնքան ավելի ակտիվ ե նրանց ագենտների — տերտերների ու աղանդավորների աշխատանքը, այնքան ավելի կատաղի յե նրանց վերաբերմունքը դեպի պրոլետարիատը, դեպի կոլխոզնիկները և նրանց յետևից գնացող չքավորներն ու միջակները: Հենց այս վերջին տարիներս, յերբ միջակները մասսաներով մտան կոլխոզները, յերբ արդյունաբերությունը քացառիկ արագությամբ աճելու ընդունակություն յերևան բերեց — հենց այդ վերջին տարիները առանձնապէս հաճախակի, առանձնապէս յեռանդուն, վճռական ու ծրագրված դարձան կուլակների ու նրանց ամենամոտ

դաշնակիցների՝ տերտերների ու աղանդավորական կազմակերպիչների յեւույթները:

Դա առաջին դեպքը չե, վոր վերջին յերկու տարվա ընթացքում արդյունաբերական, գյուղատնտեսական և ուրիշ տնտեսավարական կազմակերպություններում յերևան են հանված մլասարար կազմավերպություններ և միևնույն ժամանակ յեկեղեցականների ու աղանդավորների շրջանում՝ հակահեղափոխական դավադրություններ, — ինչպես «Ուկրայինայի ազատության միությունը», իմյասլավցիները, ֆյոդորովցիները և այլն:

Դրանք — միևնույն հակահեղ., կալվածատիրական-բուրժուական շղթայի ողակներն են:

Տնտեսավարական որդանների մլասարարները նպատակ են դնում քանդել խորհրդային տնտեսական շինարարությունը և փոխարինել խորհրդային իշխանությունը կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունով: Տերտերներն ու աղանդավորները այս

բանում ակտիվ ոգնություն են ցույց տալիս նրանց:

«Ուկրաինայի ազատության միությունը» — յեկեղեցական այդ կազմակերպությունը ձգտում էր տապալել խորհուրդները, ապստամբություններ հարուցել Սորհրդային իշխանության դեմ:

Ֆյոդորովցիներն ու իմյասլավցիները բացարձակ պայքար էին տանում ցարիզմը վերականգնելու համար:

Հակահեղափոխությունն աշխատում է դիմադրել կուլակների, տերտերների, սեկտանտների ու գեներալների խտացրած շարքերով:

Տերտերներն ու աղանդավորական գլխավորները հսկայական կազմակերպչական դեր են կատարում մեր վոխերիմ թշնամիների վորջերում:

Ամեն ուր թերթերում տեղեկություններ են տրվում այն մասին, թե ինչպես սպանել կամ ծեծել են կոլխոզի ակտիվ կառուցողին,

վառել են կոլխոզի մեքենաների կամ հացի շտեմարանը, հալածանքի յեն յենթարկել կարմիր ուսուցչին, գրգռել են խմացրած ու մութ գյուղացիներին գյուղթղթակիցների դեմ և նման շատ բաներ, վոր դժվար է մեկ-մեկ թվել:

Յերբ քննիչ որդանները քննում են այս բոլոր գործերը, ամեն մի քայլափոխում պարզվում է, վոր բոլոր հրձիգներն ու մարդասպանները գործիք են յեղել կուլակների ու տերտերների ձեռքում, վոր տերտերներն են մղել նրանց գարշելի գործեր կատարելու, խոստացել են մեղքերի թողություն, որհնել են նրանց խաչով ու «սուրբ» պատկերներով:

Շատ հաճախ է պատահում, յերբ տերտերները սրան նրան համոզում են մտնել կոլխոզ, կոոպերացիայի մեջ, վորպեսզի այնտեղ նրանք ագիտացիա մղեն կուլակներին ու կուլակների «դուրուկը փչողներին» ընդունելու համար, վորպեսզի քայքայեն մեր սոցիալիստական ձեռնարկները, խանգարեն նրանցում

ընդունելու բատրակներին, չքավորության, և ֆլասարարություններ կազմակերպեն հողագործության, անասնապահության մեջ և այլն:

Տերտերները ու կուլակների կատարած փորձերին, վոր աշխատում են իրենց մարդուն անցկացնել գյուղխորհրդում, կոոպերատիվի, կոլտոզի վարչության մեջ, պատահում ենք ուղղակի ամեն տեղ, և մեր ընթերցողին շատ լավ հայտնի յե այս բոլորը, յեթե նա գյուղում ե ապրում:

Տերտերները հարձակման են յենթարկում վոչ միայն տնտեսության սոցիալիստական շինարարությունը, այլ և նոր կուլտուրան, նոր կենցաղը:

Նրանք դժոխքի տանջանքներով ու աստվածային անեծքներով են սպառնում, յերբ ամուսնանում են առանց տերտերի՝ միայն զագսում արձանագրվելով, յերբ մայրերն իրենց մանուկներին տեղավորում են մանկական մսուրները:

Նրանք կատաղում են, ընթերցողի ձեռքին տեսնելով «Պրավդա», «Բոլշևիկ», «Անաստված», «Խորհրդային Հայաստան» թերթերը: Տերտերները ծաղրում են մեր պայքարը ակոհով դեմ:

Նրանք սաստիկ կատաղում են անընդհատ շաբաթվա առթիվ:

Նրանք անիծում են ֆիզկուլտուրան, վորը վորպես թե ուշադրությունը հեռացնում ե հոգու փրկության հոգսերից:

Ինչ ել վոր կուսակցությունը առաջարկի, ինչ կարգադրություն ել վոր խորհրդային կառավարությունը հրատարակի, դրան ամեն ժամանակ և անպայման դիմադրություն են ցույց տալիս տերտերներն ու աղանդավորների կազմակերպիչները:

Միանգամայն պարզ ե նրանց հակահեղափոխական, հակախորհրդային դերը:

Բայց սարսափելի չեր լինի, յեթե գործը սահմանափակվեր հենց միայն տերտերների

ու աղանդավորական առաջնորդների վնասա-
րարություններով: Այդ թշնամիներին կա-
րելի չե մերկացնել, դատի յենթարկել և զի-
նաթափ անել:

Գլխավոր ցամառն այն է, վոր բացի տեր-
տերներէց դեռ կան ելի մթազնած ուղեղի
տեր հավատացյալներ, վորոնք կուրորեն հա-
վատում են իրենց «հոգևոր հայրերի» խոս-
քերին:

Գլխավոր ցամառն նրանում է, վոր դեռ կեն-
դանի յե ու լայն տարածված է կրօնը:

Հակահեղափոխական, վնասարար դեր են
խաղում վոչ միայն տերտերները, այլ և հենց
ինքը կրօնը:

Շատ ու շատ դեպքեր կան, յերբ բանվոր,
չքավոր կամ միջակ հավատացողը դուրս է
գալիս ընդդէմ հենց իր իսկ իշխանության,
ընդդէմ կոլխոզի կազմակերպման, իսկ հետո
զղջում է և ասում, թե ինքն այդ արել է
իր տգիտության պատճառով, տարված լինե-

լով կրօնական զգացմունքով և հետո ազի-
տացիայի յենթարկված լինելով իհարկե մի
վորևէ յեկեղեցական ավագի, տերտերի կամ
«քրիստոսասեր»-ի կողմից:

Դժվար է թվերով արտահայտել կրօնի
տված վնասների չափը:

Վորքան հաց է խժռել մորելսը հենց միայն
այն պատճառով, վոր հավատացյալ գյուղացի-
ները վոչ թե քիմիական թուլներով, այլ սուրբ
ջրով եյին «կուվում» (նույնպէս «կուի» է)
դաշտերի այս վնասատուի դէմ:

Վորքան պակաս հաց ու գյուղատնտեսա-
կան ուրիշ մթերքներ է ստացվել այն պատ-
ճառով, վոր գյուղացիներից շատերը մեղք
եյին համարում վերջ տալու յեռադաշտյան
սիստեմին, վոր ստեղծված էր աստվածային
յերրորդության պատկերով:

Վորքան ժողովուրդ է մեռել ու հիվան-
դացել կրօնական ծեսերի պատճառով:

Յեվ ինչքան շատ հացերն ու խոտերը

հավաքելու լավ որեր են բաց թողնվել տո-
ների պատճառով:

Վորժան թշնամություններ են տեղի ունե-
ցել ծննդյան, զատկի, յերրորդության, ան-
վանակոչության որերի արբեցության հե-
տևանքով: Իսկ քմնի հարյուրավոր միլիոն-
ներ ե ծախսում հավատացող ազգաբնակու-
թյունն ամեն տարի տերտերների, յեկեղե-
ցիների բարեգարդության, սուրբ կոնծաբա-
նությունների, վորկրամոլությունների վրա:

Արժե մտածել դրա վրա մի քիչ ավելի
խորը կերպով և այն ժամանակ հավա-
տացող բանվորը, կոլխոզնիկը, չքավորն ու
միջակը, կուստարն ու ծառայողը գոնե մո-
տավորապես իրենց կպատկերացնեն այն, թե
վորժան ավերիչ ե կրոնը, վորժան վնասակար
կերպով ե նա ազդում մարդկային գիտակ-
ցության վրա:

Դրա հետ մեկտեղ կրոնը սովորեցնում ե
աշխատավորներին հաշտվել յերկրային դժվա-

րությունների հետ, հաշտվել և կուլակի հետ,
և նեպմանի հետ, և շահագործման ամբողջ
կարգերի հետ:

Վորժան փորձանքներ ե պատճառել կրո-
նական այն համբերատարությունը, խոնար-
հությունը, վոր քարոզվում ե աշխարհի այժ-
մյան բոլոր կրոնների կողմից առանց մի
վորեւ բացառության: «Աստված կոգնի»,
«ամեն ինչ աստծու ձեռքին ե» — ուրեմն ել
ինչ հարկավոր ե սերմացուն հականեխման
յենթարկել, բազմադաշտյան սխտեմ մտցնել,
հացահատիկների վնասատուների — դաշտային
մկների դեմ պայքարել... «ամեն ինչ աստծու
ձեռքին ե», «աստված վոր կամենա, մի մազ
անգամ չի ընկնի մարդու գլխից» և իզուր
բան ե հիվանդին հիվանդանոց գնալը:

Ինչո՞ւ պայքարել պատերազմի դեմ, վոր
հաճելի յե կալվածատիրոջ ու կապիտալիստի
համար. աստված կամենա — կենդանի կվե-
րողառնամ, չկամենա — կսպանեն կամ կվի-
րավորեն:

Աշխատավորների մեջ շատ կան հավատա-
ցողներ, բայց շատ կան և չհավատացողներ:

Բայց մտածել ես արդյոք, ընթերցող, թե
ինչո՞ւ այդ բոլոր կուլակները, բոլոր նեպ-
մանները, սոցիալիզմի բոլոր թշնամիները,
բանվորների, չքավորների ու միջակների բո-
լոր վոխերիմ հակառակորդները սարի պես
են կանգնած կրոնի համար:

Ինչո՞ւ նրանց շրջանում դուք չեք գտնի
այնպիսի մարդկանց, վորոնք ժխտեյին, չըն-
դունեյին կրոնը:

Ինչո՞ւ կրոնի պաշտպան են կանգնած նույն-
իսկ այն կուլակները, գործարանատերերը,
բանկիրները, վորոնք վոչ աստծու, վոչ ել
սատանայի յեն հավատում:

Միայն նրա համար, վոր կրոնը ձեռնառու
յե շահագործողներին, նրա համար, վոր նա
աշխատավորների միտքը խավարեցնում,
ուժասպառ ե անում նրանց, մի կողմ ե
ուղղում նրանց ձեռքը, վոր բարձրացած ե

լինում իրենց դասակարգային թշնամու-
գլխին:

Կրոնին, տերտերականությանը, աղան-
դավորությանը ամենավճռական և կազմա-
կերպված հակահարված պետք ե հայտարա-
րել, կրոնի հակահեղափոխական եյությունը
մերկացնելով և մասսաներին սոցիալարա-
րության գործնական աշխատանքների մեջ
ներա քաշելով:

Դրա հետ միասին անհրաժեշտ ե անողոք
պայքար աջ ոպորտունիստների դեմ, վորոնք
հրաժարվում են կրոնի դեմ պայքարելուց և
«ձախ» խոտորողների դեմ, վորոնք պայքարը
տանում են ագամինիստրատիվ միջոցներով:

Պետք ե կուլել նույնպես և կրոնական
տոների դեմ:

Մեզ բոլորիս հայտնի յե, թե վորքան մեծ
ե ընդհանրապես տոների դերը:

Վերջենք մեր հեղափոխական տոները:

Մայիսի 1-ին կամ Հոկտեմբերյան տարե-
դարձի որը ամբողջ յերկրում միլիոնավոր
աշխատավորներ փողոց են՝ դուրս գալիս
կարմիր դրոշակներով:

Այդ որերին մենք բոլորս ել ուրախ, բարձր
տրամադրության մեջ ենք լինում: Յուրա-
րարների կանոնավոր սյունաշարքերի մեջ
մենք տեսնում ենք հեղափոխական պայքա-
րում ու սոցիալիստական շինարարության
մեջ մեր ընկերներին. մենք սովորականից
ավելի շատ ենք խոսում մեզ նպատակների
ու պայքարի ձևերի մասին. մեզնում սրվում է
ընկերականության, համերաշխության զգաց-
մունքը, մենք սովորականից ավելի պայ-
ծառ կերպով ենք գիտակցում մեր գործի
մեծությունն ու արդարությունը:

Մեր գիտակցությունը ել ավելի յե սըր-
վում, մեր կամքը հաղթանակի համար է
ամրապնդվում, տոնից մենք դուրս ենք գա-
լիս վորպես սոցիալիզմի ու խորհրդային իշ-

խանության ավելի ևս ամրապնդված ու գի-
տակից կողմնակիցներ:

Շատ մեծ է կարմիր տոնի դերը:

Բայց վորքան մեծ է կարմիր տոնի դերը,
նույնքան էլ միասակար է կրոնական տոնի
դերը:

Հավատացողները ծննդյան կամ գատկի
որը իրենց բարձր տրամադրության մեջ են
զգում, նրանք սովորականից ավելի շատ են
խոսում աստծու, քրիստոսի, կրոնի մասին
ընդհանրապես: Իսկ տերտերները դեպի կրո-
նական հարցերն յեղած այդ ուշադրությունը
մեծ հմտությամբ ոգտագործում են՝ սոցիա-
լիզմի դեմ պայքարելու համար:

Նրանք մոբիլիզացիայի յեն յենթարկում
իրենց բոլոր ուժերը, պատարագներ են մա-
տուցում բոլոր յեկեղեցիներում, ման են
գալիս բնակարաններն ու խճիթները մաղ-
թանքներ կատարելով, քարոզներ են ար-
տասանում, ամեն կերպ տաքացնում են

կրօնական տրամադրությունները, աշխատում են իշխել հավատացողների մտքերին, լարել նրանց կրօնական զգացմունքները մինչև մոլեռանդություն, դիմելով զանգահարության, խմբական յերգեցողության, վռակե շուրջառների, վառվող մոմերի առատության, ուժեղ խնկարկության:

Տերտերներն որհնում են վորկրամոլությունն ու առատ խմիչքները և վորկորները լցրած, խմած հավատացյալների թուլացած ուղեղների մեջ հակախորհրդային ագիտացիայի հոսանք են մղում, նրանց զրգուելով կուսակցականների, կոլխոզնիկների, գյուղխորհրդի անդամների դեմ, վառելով զանազան անբավականություններ, ոգտվելով մեր ամեն մի պակասությունից ու սխալներից, վորոնք դեռ շատ են մեր մեծ ու դժվարին շինարարության մեջ:

Ծննդյան տոներին յեկեղեցիներում մեծ բազմություն ե լինում, տերտերները լսող-

ների մեծ մասսա յեն ունենում իրենց առաջ: Բոլոր այդ մասսաները ծննդյան որերին միացած են լինում իրար հետ մի ընդհանուր մտքով՝ քրիստոսի ծննդյան յերևակայական մեծ յեղելության մասին: Բոլոր այդ մասսաներն հենց իրենք են մտածում և խոսում քրիստոսի վարդապետության — խոնարհության, համբերության, հոգու փրկության, յերկրային կյանքը արհամարելու մասին: Տերտերները վարպետուեն ոգտվում են այդ տրամադրություններից: Տերտերներն ու աղանդավորական քարոզիչները կատաղի ագիտացիա յեն մղում ծննդյան տոներին: Այդ որերում կրօնական ուղղակի ամբողջ ակտիվը մոբիլիզացիայի յե յենթարկվում: Ագիտացիա յե գնում յեկեղեցում, յեկեղեցու մոտերը, ճաշի սեղանի վրա, թեյի ժամանակ, պատահական հանդիպումի ժամանակ: Ագիտացիա յեն մղում տերտերները, սարկավազները, տիրացուները, յերգեցողության խմբապետ-

ները, յերեցիոխները, խաչվառակիրները, տերտերականության ու աղանդավորության բոլոր հավատարիմ ծառաները:

Տերտերները կուլակաների հետ միասին խնամքով պատրաստվում են ծննդյան տոների համար: Կազմվում են բնակարանների ու խրճիթների ցուցակներ, վոր պետք է անձամբ տերտերն ինքը շրջի. նախապատրաստվում է յեկույթների ծրագիրը, մշակվում է այն հարցը, թե ինչպես ժամասացությունն ավելի հանդիսավոր ու գրավիչ դարձնել:

Յեկեղեցական բոլոր դեկավարները իրենց հավատացյալ ծխերին հորդորում են, վոր ծննդյան տոնն անցկացվի կուշտ, համեղ կերպով և առատ խմիչքներով: Տերտերները գիտեն ինչ են անում: Նրանց լավ հայտնի յէ, վոր աշխատավոր հավատացյալները դարերով կիսաքաղց դրության մեջ են անց կացրել և վոր լավ ուտելը յերկար ժամա-

նակ մնում է հիշողության մեջ: Տերտերները հրաշալի կերպով հասկանում են, վոր ծննդյան օրերի շատակերությունը տոնի մասին հաճելի հիշողություններ է առաջ բերում վատ կերակրվող մարդկանց մեջ:

Ինչպես փոքրիկ յերեխաներն անհամբերությամբ սպասում են ծննդյանը, վորպեսզի պար գան տոնածառի շուրջը ու նրանից հանված քաղցրեղեններ, փայլուն խաղալիքներ ստանան, նույնպես ել հասակավոր հավատացողներն են սպասում ծննդյանը, յերբ կարելի կլինի բավականաչափ կուշտ ու համեմատաբար համեղ բաներ ուտել-խմել:

Ահա և ուտում ու խմում են:

Իսկ հետո՝ կոմիսարիատներն ու հիվանդանոցները լիքն են հարբած մարդկանցով, սկանդալիստներով, տուրուղմբոց սարքողներով, խուլիգանություն անող, վիրավորված, վերելի հարկերի լուսամուտներից իրենց վայր գլորած մարդկանցով:

Քաղաքներում՝ շուտափույթ ոգնության
կառքերը, գյուղերում — բժիշկներն ու բու-
ժակներն աշխատում են պարզապես ծան-
րաբեռնված կերպով:

Բոցավառվում են տներն ու խրճիթները՝
հարբած ձեռքերի գցած կրակով:

Իսկ գլխավորը, — ամբողջ յերկրում, բո-
լոր բնակելի կետերում, վորտեղ կուլակներ
ու տերտերներ կան, դանակների ու բա-
ժակների գնգզնգոցի տակ մի կատաղի ազի-
տացիա յե տարվում բոյլշեիկների, խորհուրդ-
ների, անաստվածների, կոլխոզների, կոոպե-
րացիայի դեմ...

«Քրիստոսը ծնվել է, իսկ բոյլշեիկները հա-
կառակ են քրիստոնեյության և վոչ մի քրիստոս
չեն ճանաչում: Կոոպերատիվները պատրաս-
տություն չեն տեսնում ծննդյան տոների շա-
տակերության ու արբեցողության համար»:

Ողու գոլորշիներից տաքացած կրոնական
բարձր տրամադրությունը, խիստ շատ ուտե-

լուց թուլացած մարմինը, արբած մարդու
լուրջ մտածելու անընդունակությունը ոգ-
նում են կուլակա-տերտերական ազիտա-
ցիային:

Քրիստոսի ծնունդը — դա մի վոսկե տոն է
կուլակության համար:

Ողին ու կրոնը — այդ յերկու թույնը միշտ
եւ գործիք են ծառայել դասակարգային թշնա-
մուն աշխատավորների ուղեղները թմրաց-
նելու համար:

Ծննդյան, ինչպես և կրոնական մյուս տո-
ների դեմ անհաշտ պայքար պետք է մղել:

Թող անցյալի բաժին դառնան այդ «սուրբ»
որերը և ամենից առաջ ծնունդն ու զա-
տիկը, տերտերական մորելիկացիայի ու ազի-
տացիայի այդ որերը, — միջակների, չքավոր-
ների և նույնիսկ բանվորների առանձնապես
յեռանդուն ու մառսայական հիմարացման
այդ որերը — ինչպես սիրում եր արտահայտ-
վել Լենինը:

Թող այն հսկայական միջոցները, վորոնք ծննդյան տոներին տրվում են տերտերներին, աղանդավորների ղեկավարներին, արադ քաշողներին և լավվում ուտվում են — Թող այդ հսկայական միջոցները ծախսվեն տնտեսության վրա, հրդեհաշեջ սայլախմբերի, դպրոցների և ելի ուրիշ շատ ոգտակար բաների վրա:

Բանվորները, կոլխոզնիկները, չքավորները իրենց ամբողջ ուժը պետք է կենտրոնացնեն այնպիսի գործերի վրա, վորոնք միայն կվոչնչացնեն ներկա դժվարությունները և նոր, շահագործումից դուրկ, ուրախ կյանքի կհասցնեն:

Նախապատրաստենք մեզ այն բանի համար, վոր կուլակների ու նրանց դաշնակից տերտերների, աղանդավորական առաջնորդների և կրոնական ուրիշ ակտիվիստների ագիտացիային ու կազմակերպությանը պատասխանենք տասնապատիկ կազմակերպու-

թյամբ և ակտիվ մասնակցություն ցույց տալով սոցիալիստական, կենցաղային շինարարության ֆրոնտում:

Ծավալենք իր ամբողջ լայնությամբ և խորացնենք, կանոնավորենք արդյունաբերության մեջ հնգամյակը չորս տարում կատարելու պայքարը: Ճիգ ու ջանք թափենք պլանների կենսագործման, հանդիպակաց արդֆինպլանի, հարվածայնության, սոցմրցության և աշխատանքային դիսցիպլինի համար: Զգտենք հասնել այն դրության, վոր բանվորներն ու ծառայողները բոլորն ել աշխատանքի դուրս գան «քրիստոսի ծննդյան» տոներին, և վորպեսզի այդ որերին ավելի ևս մեծ չափերով հաստատվի բանվորների մեջ այն գիտակցությունը, վոր կրոնն իսկապես ամրապնդում է հին, ստրկական վերաբերմունքը դեպի աշխատանքը, հաստատում է հին, շահագործական կենցաղը:

Ձգտենք հասնել այն դրության, վոր վոչ միայն ծննդյան ժամանակ, այլ և հետագա որերում, տասնորյակներում, ամիսներում եւ աշխատանքի դուրս գալն սկսի ավելանալ, թրե գալը, շորթումները, գործին անհոգ վերաբերմունքը արագ անհետանա:

Ծննդյան որերին ամենայեռանդուն ազիտացիա ծավալենք հոգուտ կոլխողային շինարարության, կուլակության վերացման՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա, հոգուտ բազմադաշտյան սիստեմի, ռացիոնալ անասնապահության ու խոտացանության, մեքենատրակտորային կայանների, սիլոսային աշտարակների և այլն:

Տերտերական ագիտացիային կոոպերացիայի դեմ պատասխանենք լայն ագիտացիայով կոոպերացիայի, նրա շարքերը թշնամական տարրերից զտելու և կոոպերատիվային ամբողջ աշխատանքը կանոնավորելու համար:

Ծննդյան որերը դարձնենք յերկաթուղային բեռները լցնել — դատարկելու և շոգեկառքերն ու վագոնները նորոգելու որինսկելի որեր:

Շատակերությանն ու արբեցությանը, զանգահարություններին ու պատարագի «սուրբ» յերգեցողությանը պատասխանենք լավ, կազմակերպված ձևով տարվող հակածննդյան կամպանիայով, կազմակերպելով հակակրոնական ու հակաշահագործական բովանդակություն ունեցող հետաքրքիր հոգվածների ու պատմվածքների պատրաստված ընթերցանություն, դնելով թատրոնական ներկայացումներ, կոնցերտներ և այլն ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, գյուղացու տներում, դպրոցներում:

Լայն ագիտացիա ծավալենք՝ մարտնչող անաստվածների Միության բջիջների շարքերը մտնելու, այդ բջիջները ամրապնդելու համար, անգրագիտության վերացման, գա-

նագան կուրսերի, հանրակրթական խմբակ-
ների համար: Ծննդյան որերին ստեղծենք
հազարավոր նոր խմբակներ, ներգրավենք
անգրագիտության վերացման խմբակների
մեջ տասնյակ հազարավոր նոր անդամներ
բանվորներից, կոլխոզնիկներից, չքավորնե-
րից, միջակներից, կուստարներից, ծառա-
յողներից:

Նոսրով ու գործով ցույց տանք ծննդյան
տոների ժամանակ, թե ինչպես կարելի յե
ազատ որերին զվարճանալ ու հանգստանալ
առանց ողու ու գարեջրի:

Բաց անենք այդ որերին ինչքան կարելի
յե նոր ճաշարաններ, թեյարաններ:

Տերտերների ագիտացիային հոգուտ հին
ընտանիքի, հոգուտ ստրկական այն հին վե-
րաբերմունքի, վոր ունեյին հայրերը դեպի
յերեխաները, տղամարդիկ—դեպի իրենց կա-
նայք, տղաները — դեպի մայրերը, այդ ագի-
տացիային պատասխանենք մանկամսուրների,

մանկական ամեն տեսակի ոջախների կազ-
մակերպումով:

Ծննդյան որերին տռանձնապես գրավիչ
ու հետաքրքիր դարձնենք մեր պատի թեր-
թերը, դրանք լցնենք հակակրոնական բո-
վանդակությամբ և ցույց տանք, թե ինչպես
անբաժան ե կրոնը շահագործումից, տեր-
տերը—կուլակից, անաստվածությունը—սո-
ցիալիստական շինարարությունից:

Յեւ թող ծննդյան որերին առանձնապես
համոզիչ կերպով ծավալվի և ցույց տրվի,
վոր կրոնը հետադիմական դեր ե խաղում
վոչ միայն Նորհրդային Միության մեջ, այլ
և ամբողջ աշխարհում, վոր նա պաշտպա-
նում ե կալվածատերերին՝ չքավոր ու մի-
ջակ գյուղացիների դեմ, գործարանատերե-
րին՝ բանվորների դեմ, և վոր նա ոգնում ե
անգլիական, ֆրանսիական, յապոնական,
ամերիկական և ուրիշ յերկրների կապիտա-
լիստներին—այդ թալանչիներին, դրանց ձեռ-

քից տանջվող հարյուր միլիոնավոր ինդուս-
ների, չինացիների, կորեյացիների, նեգրերի
և գաղութային ուրիշ ստրուկների ու կիսա-
ստրուկների դեմ: Յուլյց տանք, վոր խաչը,
կիսալուսինը, հրեական թորան համաշխար-
հային շահագործման միլենուլյն նշաններն են
ներկայացնում իրանցից:

Ագիտացիա ծավալենք ծննդյան որերին—և
անենք այդ շարունակ, մինչև վոր ամբողջ հո-
ղազնգի վրա ալլև չեն լինի կալվածատերեր
ու կապիտալիստներ — ագիտացիա ծավալենք
հողուտ Համաշխարհային Հոկտեմբերի:

Յուլյց տանք, վոր բոլոր կապիտալիստները
միացած են իրար հետ դեպի հեղափոխու-
թյունն ունեցած ատելությունով, վոր բոլոր
տերտերները գործում են միասնական ֆրոն-
տով, դեկավար ունենալով Հոմի պապին,
կապիտալիստական ամենագորեղ յեկեղացա-
կան կազմակերպության — կաթոլիկության
այդ գլխավորին:

Յեվ դրան վորպես հակակշիռ տանք այն
պատկերը, թե ինչպես պապի դեմ դուրս
յեկան կապիտալիստական պետությունների
բանվորները՝ Խորհրդային Միության պաշտ-
պանության համար, ինչպես խտանում են
չինական գյուղացիների շարքերը չինական
բանվորների շուրջը, ինչպես բարձրանում
ե հեղափոխական շարժման ալիքը Հնդկաս-
տանում և կապիտալիստական ուրիշ յերկը-
ներում:

Վորպես պատասխան այն ագիտացիայի,
վոր տերտերներն են մղում քրիստոսի մա-
սին, իբրև մի նշանաբանի՝ ամբողջ քաղա-
քակրթված աշխարհի համար, մատնացույց
անենք, վոր Լենինի անունն արդեն պրոլե-
տարիատի ու չքավոր գյուղացիության նշա-
նաբանն ե դարձել աշխարհի բոլոր մասերում:

Մեր յերկիրն առաջ ե շարժվում ամենա-
դժվար պայմաններում, նա բարձրացնում ե
դաշտերի բերքատվությունը կոլեկտիվացման

ու աշխատանքի կատարելագործված ձևերի միջոցով: Խորհրդային Միությունը բարձրացնում է արդյունաբերությունը չլսված արագությամբ:

Խորհրդային Միության մեջ գործադրկությունն այլևս գոյություն չունի արդյունաբերական բանվորների շրջանում:

Իսկ կապիտալիստների աշխարհում, վորն այնպես սիրելի յե տերտերների, բաբտիստների, ավետարանականների, կուլակների, նեպմանների սրտին, — սոսկալի կրիզիս է այնտեղ. գործարանները փակվում են կամ կրճատում են իրենց արտադրությունը և որեցոր աճում է գործադրկությունը:

Ժամանակը մեր ոգտին է աշխատում: Մարդկությունը գնում է դեպի սոցիալիստական հեղափոխությունները, և մեր յերկրի վրա, Խորհրդային Միության վրա մեծ սիրով են նայում բոլոր յերկրների ու ժողովուրդների աշխատավորները:

Բայց ժամանակն աշխատում է աշխատավորների ձեռքերով ու գլուխներով, իսկ այդ աշխատավորները միացած ու կազմակերպված են բանվոր դասակարգի և կոմունիստական Խնտերնացիոնալի մեջ համախմբված կոմունիստական կուսակցությունների կողմից:

Վորժան ավելի շատ համերաշխություն լինի մեր շարքերում, վորժան ավելի շատ գիտակցություն այն բանի, վոր կալվածատերերը ու կապիտալիստները, կուլակներն ու նեպմանները, տերտերներն ու աղանդավորների դեկավարները մեր անհաշտ թշնամիներն են, վորժան ավելի մեծ աշխատանքային դիսցիպլին, աշխատանքային վերելք ու ծրագրային աշխատանք լինի, վորժան ավելի յեռանդուն լինի աշխատանքը տնտեսական ու կուլտուր-կենցաղային ֆրոնտում, վորժան ավելի ուժեղ ու վարպետորեն լինի մեր պայքարը կրոնի դեմ, — այնքան ավելի վճռական, լայն ու նշանավոր կլինեն մեր

հաղթանակները, մեր նվաճումները, այնքան
ավելի կմոտենա վճռական ու վերջին կռվի
վարկյանը համաշխարհային բուրժուազիայի
դեմ, այնքան ավելի շուտ կհասնի Համաշ-
խարհային Հոկտեմբերի հաղթանակը:

Սեղմ շարքերով դեպի հակածննդյան կամ-
պանիա:

Վոչ մի գիշում կրոնական ծեսերին:

Վոչ մի հաշտվողականություն կրոնի հետ:

Բոլորդ — Լենինի դրոշի տակ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0160513

68

7 400.

Арм.
2-33446

Цена 7 коп.

А. Р.



В. САРАБЬЯНОВ
Кому нужно
рождество христово
(пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10